ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոսի

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար **Վահե Ոսկանի Պողոսյանի** «Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Վահե Պողոսյանի ատենախոսության թեման բավական արդիական է. քանի որ հասարակական-քաղաքական կյանքում իրացվող շատ խնդիրներ պայմանավորված են քաղաքական կուսակցությունների և հատկապես նրանց կուսակցական լիդերների գործունեությամբ՝ կոչված լինելով էական ազդեցություն ցուցաբերել քաղաքական մրցապայքարի վրա: Ատենախոսության արդիականությունը նաև պայմանավորված է այն հանգամանքով. որ քաղաքագիտական գրականության մեջ առկա են կուսակցական լիդերության իմաստավորման վերաբերյալ տարբեր մոտեցումներ. հաճախ մեկը մյուսին հակասող և նույնիսկ փոխբացառող քննարկումներ. ինչը վկայում է կուսակցական լիդերության հիմնախնդրի՝ ներհայաստանյան քաղաքական իրադրության պայմաններում հայեցակարգային մակարդակով բավարար մշակված չլինելու մասին: Բացի տեսական նշանակությունից. կուսակցական լիդերության հետազոտությունը ունի նաև կարևոր կիրառական նշանակություն Հայաստանում կուսակցաշինության. քաղաքական մրցապայքարի անձնակենտրոնության առանձնահատկությունների բացահայտման գործում: Բավական ուշագրավ է հեղինակի կողմից առաջադրված այն տեսակետը. համաձայն որի Հայաստանի երրորդ Հանրապետությունը Խորհրդային Միությունից ժառանգել է անձնակենտրոն մրցապայքարի քաղաքական մշակույթը. որը բնականաբար ազդեցություն է գործում քաղաքական կուսակցությունների և հատկապես կուսակցական լիդերների գործունեության վրա:

Վահե Պողոսյանի ատենախոսական հետազոտությունում պատշաճորեն ներկայացվում է թեմայի գիտական մշակվածությունը. թեմայի վերաբերյալ ակադեմիական բանավեճի շրջանակը և նոր հետազոտական աշխատանքի խիստ անհրաժեշտությունը:

Աշխատանքը բավական հարուստ է գիտական սկզբնաղբյուրներով և հղումներով: Հեղինակի ատենախոսական աշխատանքում ըստ պատշաճի սահմանված են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները: Ատենախոսությունը աչքի է ընկնում հետազոտության տրամաբանական հետևողականությամբ, փաստերի գրագետ և ճիշտ ներկայացմամբ, ինչպես նաև եզրակացությունների վավերականությամբ:

Աշխատանքը հիմնված է հարուստ տեսամեթոդաբանական հիմքի վրա: Հետազոտական աշխատանի շրջանակում հեղինակն օգտագործել է որակական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ կուսակցական լիդերների ելույթների խոսույթային վերլուծությունը (discourse analyses), փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը (content analyses), ինդուկցիայի, դեդուկցիայի, համանմանության, ինչպես նաև համեմատության և տրամաբանության մեթոդները:

Հետազոտական ախատանքի ընթացքում հեղինակին հաջողվել է լուծել առաջադրված հետևյալ հիմնարար խնդիրները.

1. Հստակեցնել կուսակցական լիդերության վերաբերյալ առկա հիմնական տեսահայեցակարգերը՝ *վերլուծելով* թեմայի վերաբերյալ ակադեմիական գրականությունը, *ձևակերպելով* ատենախոսությունում օգտագործվող «կուսակցական լիդեր» հասկացության սահմանումը, *կատարելով* «քաղաքական» ու «կուսակցական լիդեր» հասկացությունների պատմական վերափոխման ուսումնասիրություն և «քաղաքական լիդեր» ու «կուսակցական լիդեր» հասկացությունների տարանջատում:
2. Քաղաքական գործընթացներում կուսակցական լիդերների ազդեցության գործակիցը որոշելու նպատակով հետազոտել կուսակցական լիդերների ձևավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ *ուսումնասիրելով* ՀՀ-ի մի շարք կուսակցությունների լիդերների անհատական որակները, *վեր հանելով* ներկուսակցական կառավարման կարգավորումները կուսակցական լիդերի դերակատարարումը բացահայտելու նպատակով:
3. Ուսումնասիրել և առաջարկել հայաստանյան կուսակցական լիդերների տիպաբանությունը՝ *դիտարկելով* կուսակցությունների ծրագրի և կանոնադրության փոխկապակցվածությունը կուսակցական լիդերի գործունեության հետ, *բացահայտելով* ինքնավար կուսակցական լիդերների և իշխանությանը հարակից կուսակցական լիդերների տարատեսակները, *առաջարկելով* ՀՀ կուսակցական լիդերների գաղափարական տիպաբանությունը:

Ատենախոսությունը աչքի է ընկնում նաև իր գիտագործնական նշանակությամբ: Այն կարող է տեսաբանների և հետազոտողների ուշադրությանը արժանանալ՝ որպես ՀՀ-ի քաղաքական կյանքի բարդ այնպիսի հիմնախնդիրներից մեկի հետազոտություն, ինչպիսին հանդիսանում է կուսակցական լիդերությունը: Հետազոտությունը կարող է օժանդակել ժամանակակից հայաստանյան իրողություններին առավել համապատասխան կուսակցական լիդերների տիպերի և մոդելների բացահայտմանը: Աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ՀՀ-ում ներկուսակցական ժողովրդավարության ամրապնդման և արդյունավետ կուսակցաշինության համատեքստում:

Ատենախոսական աշխատանքի շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքը աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ: Համապատասխան խնդիրներ ձևակերպելու, դրանց համապատասխան մեթոդներ գործադրելու և եզրակացություններ կատարելու՝ ատենախոսության մեջ ներդրված մշակույթը փաստում է Վահե Պողոսյանի գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ձևավորված կարողությունների մասին:

Միաժամանակ, ատենախոսության մեջ առկա են նաև որոշ թերություններ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

1. Չնայած նրան, որ ատենախոսության երկրորդ գլուխը կրում է ՝Կուսակցական լիդերության ինստիտուտը քաղաքական համակարգի կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացում՝ անվանումը, այնուամենայնիվ, գլխի շարադրանքում ատենախոսը գրեթե չի անդրադառնում ժողովրդավարացման խնդիրներին՝ սահմանափակվելով միայն նորանկախ Հայաստանում կուսակցական համակարգի կայացման պատմական ակնարկով: Մինչդեռ ակնհայտ է, որ հենց ժողովրդավարացման համատեքստում խնդրի ուսումնասիրումը թույլ կտար հավուր պատշաճի գնահատել Հայաստանում թե՛ կուսակցական մշակույթի, թե՛ կուսակցական համակարգի առանձնահատկությունները: Հայաստանում ժողովրդավարացման ընթացքի վերաբերյալ հստակ գնահատականների ու մեկնաբանությունների բացակայությունը թույլ չի տվել հեղինակին խորապես ըմբռնելու ու ներկայացնելու կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման ընթացքը:

2. Աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակը անդրադառնար կուսակցական լիդերության կայացման քաղտեխնոլոգիական կողմին: Վերջինիս նպատակահարմարությունը կայանում է նրանում, որ առկա տեղեկատվական հասարակության պայմաններում լիդերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը հաճախ կրում է ոչ օրգանական բնույթ՝ հանդես գալով առավելապես քաղտեխնոլոգիական, սոցիալ-հոգեբանական գործունեության արգասիք: Այս առումով հետաքրքիր կլիներ ծանոթանալ ատենախոսի անդրադարձին Հայաստանում գործող կուսակցությունների տեղեկատվական ռազմավարությանը, մեդիա-մենեջմենթին, իմիջմեյքինգային գործառույթներին և այլն:
3. Ատենախոսության թույլ կողմերից կարելի է համարել սոցիոլոգիական մեթոդի անտեսումը, մինչդեռ վերջինս թույլ կտար անետախոսին հանդես գալ ոչ միայն որակական, այլ նաև քանակական գնահատականներով: Հատկապես աշխատանքի երրորդ գլխում անհրաժեշտ էր համակարգված ներկայացնել Հայաստանում գործող կուսակցությունների ու կուսակցական լիդերների վարկանիշային ցուցանիշները, վերլուծել դրանց փոփոխության դինամիկան, ինչը կհիմնավորեր ատենախոսի կողմից առաջ բերված որոշ եզրակացություններ ու հիմնադրույթներ առանձին քաղաքական ուժերի վերաբերյալ:
4. Էջ 115-ում հեղինակը գրում է, "...դեռևս 2018 թ.-ին Ռոբերտ Քոչարյանը հայտարարել էր քաղաքական կուսակցության ստեղծելու մտադրության մասին, որը կարողացավ իրագործել միայն 2021 թ.-ին": Պնդումը կոռեկտ չէ, քանի որ ՀՀ երկրորդ նապագահը որևէ կուսակցություն չի հիմնադրել՝ սահմանափակվելով արդեն գոյություն ունեցող կուսակցություններից դաշինք ստեղծելով, ինչը համարժեք չէ կուսակցության ստեղծմանը:
5. 3.2.-ում հեղինակը նկարագրում է 2018 թ.-ից հետո Հայաստանում կուսակցական լիդերության ինստիտուտի դրսևորման առանձնահատկությունները՝ սահմանափակվելով միայն առանձին կուսակցությունների քաղաքական-գաղափարական դիրքավորման արձանագրմամբ: Աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակը դրսևորեր քննադատական մոտեցում՝ պարզելու համար 2018 թ.-ից հետո թե՛ մի շարք ընդդիմադիր կուսակցությունների ձախողման և դե-ֆակտո գործունեության սառեցման, թե՛ իշխող "ՔՊ" կուսակցության վարկանիշի շարունակական անկման պատճառները:

Այդուհանդերձ, նշված թերությունները չեն նվազեցնում Վահե Ոսկանի Պողոսյանի «Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության գիտական արժեքը: Այն լիովին համապատասխանում է ԻԳ.00.02, «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և հեղինակը արժանի է իր կողմից հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
UNESCO-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր

Վահե Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոս քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ

ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հ. Փիլավջյան

ք. Երևան
09.01.2024 թ.